«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/686

«02» 06 2025թ.

ք. Երևան «02» հունիսի 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ԱԲԳԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 29.05.2025թ.-ի զեկուցագրով «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, ***պարզեցի հետևյալը***.

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.

Գնահատող հանձնաժողովի նախագահը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 29.05.2025թ.-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար 2025 թվականի ապրիլի 28-ին հայտարարված շինանյութերի ձեռքբերման «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը:

Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 23-ի թիվ 2 որոշմամբ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. Հայտով ներկայացված չի եղել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ համաձայն հրավերի հավելված 1.3-ի:

3. Հայտով ներկայացված չի եղել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը (ամբողջական նկարագիրը), որը պետք է ներկայացվեր Համակարգի՝ www.eauction.armeps.am կայքի միջոցով:

Նույն օրը, «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը **<u>շտկման նպատակով</u>** Համակարգի՝ www.eauction.armeps.am կայքի միջոցով ծանուցվել է այն մասին, որ անհրաժեշտ է ներկայացնել.

- Շտկված Հավելված 1-ը՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:
- Բացակայող իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, համաձայն հրավերի հավելված 1.3-ի՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:
- Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը (ամբողջական նկարագիրը), որը պետք է ներկայացվի Համակարգի՝ www.eauction.armeps.am կայքի միջոցով:

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից **<u>չեն շտկվել</u>** արձանագրված անհամապատասխանությունները, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները՝ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտը թիվ 18 չափաբաժնի մասով գնահատել է անբավարար և մերժել, և Ընթացակարգը թիվ 18 չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) և (բ) պարբերությունների համաձայն՝

Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

*ա. խախտել է պայմանագրով նախատեսված **կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը **կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,*

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնման ընթացակարգի հրավերի 8-րդ մասի 8.15-րդ կետի համաձայն՝

8.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

• *սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.*

• *մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:*

Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը ներառյալ այն դեպքերը, ***երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները*** *կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովում կամ եթե ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորմանը համապատասխան և դրա արդյունքում համաձայնագիր կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը սահմանված ժամկետում միակողմանի հաստատված հայտարարության՝ փուժանքի (այսուհետ՝ նաև փուժանք) ձևով ներկայացված պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը չի փոխարինում բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, ապա այդ հանգամանքը համարվում է* ***որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:***

Հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) պարբերությունը, 6-րդ հոդվածի 2-րդ մասը, հրավերի 8-րդ բաժնի 8.15-րդ կետը՝ առաջարկում ենք «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Կից ներկայացվում են՝

1. «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտը.
2. «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի արձանագրությունների պատճենները.
3. Համակարգով իրականացված գործողությունների (ծանուցումների) արտատպումները:

<u>2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Գործի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը:
2. Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 23-ի թիվ 2 որոշմամբ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, որոնց շտկման մասին Ընկերությունը ծանուցվել է պատշաճ կարգով և Օրենքով սահմանված ժամկետում:

3. «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից **չեն շտկվել** էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, որը տեղեկություններ է պարունակում կայքէջի հղման մասին, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ տեխնիկական բնութագիրը, որոնք պետք է ներկայացվեին Համակարգի՝ www.eauction.armeps.am կայքի միջոցով:

4. Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները՝ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտը թիվ 18 չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել, և Ընթացակարգը թիվ 18 չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է հայտ, հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, որոնց մասին Ընկերությունը Օրենքով սահմանված ժամկետում և պատշաճ ծանուցված լինելով **չի շտկել** իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) և (բ) պարբերությունների համաձայն՝

Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

*ա. խախտել է պայմանագրով նախատեսված **կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը **կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,*

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնման ընթացակարգի հրավերի 8-րդ մասի 8.15-րդ կետի համաձայն՝

8.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր փոխանցվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան

հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կայացման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

• սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

• մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը ներառյալ այն դեպքերը, ***երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները*** *կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովում կամ եթե ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորմանը համապատասխան և դրա արդյունքում համաձայնագիր կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը սահմանված ժամկետում միակողմանի հաստատված հայտարարության՝ փուժանքի (այսուհետ՝ նաև փուժանք) ձևով ներկայացված պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը չի փոխարինում բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, ապա այդ հանգամանքը համարվում է* ***որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝

Ընկերությունը, Օրենքով սահմանված ժամկետում և պատշաճ ծանուցված լինելով արձանագրված անհամապատասխանությունների մասին, **չի շտկել** իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան՝ խախտելով **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից **գնման գործընթացին տվյալ Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը**:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ***քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորություն (չի շտկել շտկման ենթակա փաստաթղթերը), որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը***:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը, «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզիկական անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	08287363	ք. Երևան, Արաբկիր, Կիևյան փողոց 8 շենք բնակարան 62	X	-	-	02.06.2025թ., «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-4-ԵՊԲՀ»

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐ **ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ**